



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՊԱՀՏՈՆԱԿԱՏԱՐ
Դ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«24» 05 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0092-21

Ձեռնարկողը՝

«Ասքմեղ դիզայն» ՍՊԸ

ք.Երևան, Սայաթ-Նովա 25.2

Գործունեությունը՝ Մ.Մաշվոցի պողոտա 2ա հասցեում գտնվող «Հ.Կոջոյանի անվան կրթահամալիր» ՊՈԱԿ-ի շենքի ուժեղացման, վերակառուցման և նոր մասնաշենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայք

ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝

Գ. Գևորգյան

Առջիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՀՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0092-21
24 05 2021թ.

**«ԱՍՔՄԵԴ դիզայն» ՍՊ ընկերության կողմից ներկայացված, Երևան քաղաքի
Մ.Մաշտոցի պողովա 2ա հասցեում գտնվող «Հ.Կոջոյանի անվան
կրթահամալիր» ՊՈԱԿ-ի շենքի ուժեղացման, վերակառուցման և նոր
մասնաշենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահարման հայբ**

Ձեռնարկող՝
Փաստաթուղթի տեսակը՝

Գործունեությունը՝
Տեղադրման վայրը՝

«Ասքմեդ դիզայն» ՍՊԸ
Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ
«Գ» կատեգորիա
ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Մ.Մաշտոցի
պողոտա 2ա

Ներածական մաս. Գործունեության նպատակն է Երևան քաղաքի, Կենտրոն վարչական շրջան, Մ.Մաշտոցի պողոտա 2ա հասցեում գտնվող «Հ.Կոջոյանի անվան կրթահամալիր» ՊՈԱԿ-ի շենքի ուժեղացում, վերակառուցում և նոր մասնաշենքի կառուցում:

Նախագծի մշակումը կատարվել է «ԱՍՔՄԵԴ ԴԻՀԱՅՆ» ՍՊԸ կողմից: Գործունեությունն իրականացվելու է Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում:

Ծրագրի նպատակն է՝ Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակում առաջնահերթ համարվող դպրոցների ուժեղացումը և վերակառուցումը: Ծրագիրը համահունչ է «Հառավարության «Աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության» նպատակներին և ուղղված է Երկրի սեյսմակայունության ապահովմանը, անհատական և հասարակական անվտանգության մակարդակի բարձրացմանը և Երկրի կայուն զարգացմանը: Ծրագրի իրականացման արդյունքում կրարելավվի սեյսմիկ անվտանգությունը և սեյսմիկ տեսակետից կմեծանա անվտանգ դպրոցական շենքերի ծածկույթը:

Դպրոցների սեյսմիկ կայունության բարելավման ծրագրի (ԴՍԿԲԾ) համար մշակվել է Շրջակա միջավայրի վրա ազդեցության ուսումնասիրության և նախնական գնահատման սույն փաստաթուղթը: Փաստաթուղթը մշակվել է որպես ԴՍԿԲ Ծրագրի բնապահպանական գնահատման ուղեցույց Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի (ՀՏՀՀ) համար, որը հանդիսանում է Ծրագրի իրականացնող մարմինը: Այն ներառում է Ծրագրի բնապահպանական գնահատման հիմնական սկզբունքները, դպրոցների ընթրության չափանիշները և ԲԿՊ իրականացման ընթացակարգերը՝ Ծրագրի իրականացման բոլոր փուլերում:

Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքների համար հիմք է հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 27042012-01-0675 վկայականը, Երևանի քաղաքապետի կողմից տրված 30.12.2020թ. N 01/18-07/2-120046-1163 ճարտարապետահատակագծային առաջադրանքը (նախագծման թույլտվություն): Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի

տեսակը՝ անհատուց օգտագործման, կադաստրային ծածկագիրը՝ 01-006-0518-0002: Հողատարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 3605.0 ք.մ, նոր կառուցվող շենքի մակերեսը՝ 1589.30 ք.մ, բարեկարգվող մակերեսը՝ 1278.24 ք.մ, կանաչապատման մակերեսը՝ 635.28 ք.մ, սիզամարգ՝ 46.76 ք.մ, նախատեսվող աշակերտների թիվը՝ մինչև 570 աշակերտ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21 հունիսի, 2014) հոդված 14-ի կետ 6-ի համաձայն, Հակոբ Կոջոյան թիվ 15 կրթահամալիրի շենքի վերակառուցման և նոր մասնաշենքի կառուցման նախագծային փաստաթուղթը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման և փորձաքննության, քանի որ ընդհանուր կառուցապատվող տարածքի մակերեսը գերազանցում է 1500 ք.մ-ը:

Ելնելով շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանից, նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ, որի համար պահանջվում է նախնական գնահատման հայտի պատրաստում: Նախնական գնահատման հայտի բովանդակությունը մշակվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջների համաձայն:

Նկարագրական մաս. Երևանի Հ.Կոջոյանի անվան թիվ 15 կրթահամալիրի շենքն իրենից ներկայացնում է եռահարկ քարե կառուց /կառուցված է 1937 թ./: Նախագծված է եղել որպես միջնակարգ դպրոց /Պ.Պրոշյանի անվան/: Կառուցի ծածկերը փայտյա են: Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 1149.0-1150.0 մետրի սահմաններում:

Նախագիծը ներառում է գոյություն ունեցող շենքի ճակատային մասի ուժեղացում/մնացած մասի քանդում և նորից կառուցում, ինչպես նաև նոր մասնաշենքի կառուցում: Դպրոցը նախատեսված է 12-ամյա ուսուցման:

Համաձայն պատվիրատուի առաջադրանքի նախագծված է նոր երկիրկանի կցակառուց: Ըստ նախագծի վերակառուցող մասնաշենքի առաջին հարկում տեղադրված են՝ նախասրահը, տարրական դպրոցի 8 դասարանները, բուֆետը, ուսուցչանոցը և սանհանգույցները:

Երկրորդ հարկում տեղադրված են 8 դասարաններ, ուսուցչանոցը, տնօրենի աշխատասենյակը ընդունարանով, փոխտնօրենը և սանհանգույցները:

Երրորդ հարկում նախագծված են՝ 8 դասարաններ, ֆիզիկայի և քիմիայի աշխատասենյակներ իրենց լաբորատորիաներով, ինչպես նաև աշակերտների համար սանհանգույցներ:

Կից կառուցվող մասնաշենքն իրենից ներկայացնում է ուղղանկյուն շինություն /20.60x15.90 մ/ առանցքային չափերով:

Մասնաշենքում նախատեսված են հետևյալ սենքերը՝

Սուածին հարկում՝ սպորտ դահլիճ, տղաների և աղջիկների հանդերձարաններ՝ իրենց սանհանգույցներով և ցնցուղարանով: Դահլիճին կից տեղադրված են պահեստ սարքավորումների համար, բուժկետ և մարզիչ սենյակ:

Երկրորդ հարկում՝ հանդիսությունների դահլիճ, գոյսի պահեստ, մեկ արվեստանոց և սանհանգույցներ:

Երրորդ հարկում՝ տեղադրված են չորս արվեստանոցներ քանդակի և դիզայնի ուսուցման համար, ինչպես նաև նախասրահ և պահեստ:

Նախագծային լուծումներում հատուկ ուշադրություն է դարձված մի շարք կարևոր հարցերին: Դպրոցն ապահովված է հաշմանդամություն ունեցող անձանց ուսման հիմնական պահանջներին: Սակավաշարժ խմբերի համար իին մասնաշենքում նախատեսված է եղել վերելակ, ինչպես նաև համապատասխան վայրերում՝ թեքհարթակներ:

Հակարդեհային պայմանները ապահովելու համար գոյություն ունեցող մասնաշենքում նախատեսված են երկու լրացուցիչ աստիճանավանդակներ: Նկուղային հարկից

նախատեսված են դեպի բակ երկու ելք: Տանիքի ջրահեռացումը կատարվում է կազմակերպված:

Նոր կառուցվող մասնաշենքում նախատեսվում է ներքին էլեկտրամատակարարման, արտաքին և ներքին ջրամատակարարման, կոյուղու և գազամատակարարման ցանցեր: Ջրամատակարարումը, կոյուղին և տաք ջրամատակարարումն իրականացվելու են գոյություն ունեցող ենթակառուցվածքներով:

Աշխատանքային նախագծով բոլոր մասնաշենքերում նախատեսված է ջեռուցման ներքին համակարգ, որի համար որպես ջեռուցման աղբյուր հանդիսանում է տարածքում նախատեսված կաթսայատունը:

Էլեկտրամատակարարումը, գազամատակարարումն իրականացվելու են համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների:

Նախատեսված է տեսահսկման համակարգ, որի օգնությամբ կիրականացվի դպրոցի ներքին և արտաքին հսկողությունը, իրդեհային ազդանշանման ավտոմատ համակարգ, ինչպես նաև ներքին հեռախոսակապի համակարգ:

Նախագծով նախատեսված աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը բարեկարգել և կանաչապատել, իրականացնել ցանկապատման աշխատանքներ: Կանաչապատման համար նախատեսվում է նաև նոր բուսահողի լիցք: Կանաչապատումը ներառում է՝ սիզամարգի տեսքով աշխատանքներ և ծառատունք: Նշված աշխատանքներն իրականացվելու են Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված: Դեկորատիվ տեսք ապահովելու նպատակով կանաչապատման համար օգտագործվելու է սոսի, կաղնի, գնդածն ակացիա և հացենի: Այս տեսակները հարմար են Երևանյան լանդշաֆտին և բնակիմայական պայմաններին: Երևանյան լանդշաֆտում ծառերի կազողականությունն ապահովվելու է պարտադիր ռողոման և խնամքի պայմաններում, որի իրականացման պատասխանատուն հանդիսանում են կապալառուն և դպրոցի տնօրինությունը:

Ռողոմում իրականացվելու է գոյություն ունեցող ցանցից՝ բարելավելով այն: Նոր տարածքների ռողոմը կապահովվի պահանջվող ջրաքանակին համապատասխան՝ 5.5 խմ/օր ռողոման համակարգի ջրի ծախսով:

Բարեկարգման և կանաչապատման միջոցառումները կիրականացվեն բարեկարգման և կանաչապատման պլաններին համապատասխան, որոնք ներկայացվել են բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շին աղբը և մնացորդային գրունտները 448.30 խմ ծավալով տեղափոխվելու են համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված՝ Աշակնյակ վարչական շրջանի՝ Սիլիկյան թաղամասին հարող նախկին քարհանքի տարածքում գործող շինարարական թափոնների աղբավայր /հիմք՝ Երևանի քաղաքապետի 30.06.2016 հ-2391-Ա որոշումորոշում/:

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրն ու շինարարության ընդհանուր ծավալը:

Շինարարության տևողությունը կազմում է 24 ամիս՝ շինարարության թույլտվության տրամադրման օրվանից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեթոնները և մեթոդները, իսկ բացակայության դեպքում, վաճակալել դրանք այլ կազմակերպություններից:

Շինարարության նախապատրաստական փուլում իրականացվելու են հետևյալ աշխատանքները:

- Ժամանակավոր ցանկապատի տեղադրում,
- Լոմունիկացիաների վերատեղադրում և տեղափոխում (ըստ անդամականացված աշխատանքների)
- Ժամանակավոր շինությունների տեղադրում,



- միացում գոյություն ունեցող կոմոնիկացիաներին:

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի տարածքում < Կոջոյանի անվան դպրոցի բակային մասում նոր կառուցվող մասնաշենքի տեղամասի գրունտների հորիզոնական առավելագույն արագացումների և գերակայող պարբերությունների գնահատման համար հիմք է ընդունվել <<ՀՀ 11-6.02-2006 «Սեյսմակայուն Շինարարություն Նախագծման Նորմեր» նորմատիվային փաստաթյուն ներկայացված սեյսմիկ գոտուրման քարտեզը, ըստ որի ուսումնասիրվող տարածքը գտնվում է Երրորդ սեյսմիկ գոտու մեջ: Այդ գոտուն համապատասխանում է 0.4g հորիզոնական արագացման արժեքը:

Դպրոցի կառուցման շրջանակներում կատարվող շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսված հողային աշխատանքների իրականացման ժամանակ ընդհանուր հանույթը կազմում է 1000 խմ: Վերջինից՝ 448.30 խմ ծավալը նախատեսվում է տեղափոխել Երևանի քաղաքային աղբավայր, որը համաձայննեցվել է տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Մնացած՝ 551.7 խմ հանույթը կվիրառվի հետիցքի նպատակով: Քանդված՝ 115.08 խմ ծավալով ասֆալտբետոնե ծածկույթը կտեղափոխվի առանձին:

Ելնելով անվտանգության տեխնիկայի կանոններից շինարարության տարածքը պետք է սահմանազատել: Շին. տարածքում նախատեսված է ժամանակավոր թափոնակույտ, որտեղ կուտակվող գրունտը հետագայում կօգտագործվի հետիցքի համար: Շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը և այլն կազմակերպվելու է բացառապես կրթահամալիրի վարչական տարածքի սահմաններում:

Ելնելով շինարարության ոչ մեծ տևողությունից հատուկ շինարարական բազայի ստեղծումը նպատակահարմար : Հէ: Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել լիցենզավորված շինարարական ձեռնարկություններից և գյուղավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից:

Շին. իրապարակում նախատեսվում է տեղադրել կոնտերյների տիպի հատուկ շինություններ՝ աշխատելի սենյակ, հանդերձարան, պահակատնակ, բուֆետ, ինչպես նար բիոզուգարաններ և փակ պահեստ: Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել հետևյալ սխեմայով:

- Շաղախը և բետոնը կառաքվեն մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի շին. աշխատանքների անընդհատությունը:

- Առանձին ամրանային ձողերը և կմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կրերվեն անմիջապես շինարարական իրապարակ, որտեղ կիրականացվի դրանց տեղադրումն ու պահեստավորումը:


- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինիրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով,

- Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումն ու վերանորոգումը նախատեսվում է իրականացնել մեքենայացման բազայում:

Կրթահամալիրի շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավագ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստրուկցիաներ, մետաղական կոնստրուկցիաներ և այլն:

Բնառեսություններից օգտագործվելու է ջուր՝ շինիրապարակների տարածքների ջրանի, հողի/գրունտի խոնավացման համար: Ըստ նախնական հաշվարկների ջրանի համար ջրի օրական ծախսը կկազմի՝ 0.3m^3 , իսկ տարեկան՝ $46.2\text{m}^3/2\text{հն.ժամ}$, իսկ խմելու և կենցաղային նպատակների $90.4 \text{ m}^3/2\text{հն.ժամ}$, միջին օրեկան 0.587m^3 :

Նոր կառուցվող մասնաշենքի համար նախատեսվում է իրականացնել տաք և սառը ջրամատակարարում, ջրահեռացում, հակահրդեհային սնուցող ցանց, ոռոգման ցանց,



Էլեկտրամատակարարում: Անհրաժեշտ պահանջարկն ապահովվելու է գոյություն ունեցող ցանցերից՝ համապատասխան լիազոր մարմինների կողմից տրվող տեխնիկական պահանջներին համապատասխան:

Զրամատակարարումն իրականացվելու է շենքի հարևանությամբ անցնող քաղաքային ջրամատակարարման ցանցից՝ համաձայն «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի: Գործող ջրագծին միացման կետի մոտ, նախագծվող ջրագծի վրա նախատեսվում է կառուցել ջրամատակարարման դիտահոր, որի մեջ տեղադրվում է ջրաչափական հանգույց (ջրաչափ, գոտիչ, փական, հակադարձ փական): Կենցաղային ջրի հաշվարկային ծախսը կազմում է 1.15լ/վրկ:

Շենքի դիմաց ջրագծի վրա նախատեսվում է դիտահոր, որի մեջ նախատեսվում է հակահրդեհային հիդրանտ արտաքին հրդեհաշխման համար: Ներքին հրդեհաշխման համար ջրապահանջը՝ կախված շենքի հարկայնությունից և ծավալից կազմում է 1 շիթ 2.5լ/վրկ: Արտաքին հրդեհաշխման համար անհրաժեշտ ջրապահանջը կախված շենքի հարկայնությունից և ծավալից կազմում է 20 լ/վրկ, հրդեհաշխման տևողությունը՝ 3 ժամ: Ենթուվ հակահրդեհային ջրաքանակից քաղաքային ցանցից միացումը նախատեսվում է իրականացնել 160մմ տրամագծի պոլիէթիլենային խողովակներով:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվելու են տեխնիկական հսկողության իրականացնող մարմնի կողմից:

Շինարարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգներով և կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:


Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտանետումներից:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Հետիոտների անվտանգությունը ապահովվելու նպատակով շինարարակը անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- շինարարական աշխատանքներում փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրանում տարվա շոգ և չոր եղանակներին,
- ջրանի ծավալները հաշվարկվում են այսպես, որ չառաջանան մակերևության հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,



- կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կներկայացվի Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության համաձայնեցմանը,
- նախատեսվող նոր կանաչապատումը տարածքների համար անհրաժեշտ կլինի բռաահողի լիցք մոտ 42 խմ, որի ծեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի <<գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Երևանի քաղաքապետարանի հետ,
- կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է գոյություն ունեցող ոռոգման ցանցից՝ 5.5 խմ/օր ջրի ծախսով,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորումներ:

Կրթահամալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղած հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ:

2. Օգտագործված մեթենայական յուղերով ու քայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուանդիլու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ:

3. Աղմուկի, թրթոռումների և տատանումների մշտադիտարկումներ:

4. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն << կառավարության 2020թ. հունիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների:

5. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

Պարբերաբանական մաս. Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, << օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևան քաղաքի, Կենտրոն վարչական շրջանում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ «Արտակարգ իրավիճակների», «Առողջապահության», «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» նախարարություններից, «Քաղաքաշինության կոմիտեից», «Կադաստրի կոմիտեից», «Կենտրոն վարչական շրջանից» ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել «Հայտի» լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Կրթահամալիրի շինարարական աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է պահպանել << առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով

հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենթերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել <<քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված <<ԸՆ 1-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:

2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝

- պարսպապատել շինարարական հրապարակը,
- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,

- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողները լվանալ,
- բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարրեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել <<օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված»:

4. Տարածի կանաչապատման աշխատանքներն իրականացնել Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի համաձայն, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:

5. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:


6. Համաձայն <<կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 2 հավելվածի 13-րդ և 15.1-րդ կետերի՝ կրթահամալիրի շենքի ուժեղացման, վերակառուցման և նոր մասնաշենքի կառուցման նախագիծը ենթակա է պետական համալիր փորձաքննության»:

7. <<կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:


ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ասքմեդ Դիզայն» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի, Կենտրոն վարչական շրջան, Մ.Մաշտոցի պողոտա 2ա հասցեում գտնվող «Հ.Կոջոյանի անվան կրթահամալիր» ՊՈԱԿ-ի շենքի ուժեղացման, վերակառուցման և նոր մասնաշենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ


Վ. Վարդանյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ


Խ. Մարտիրոսյան